

ՀԱՅԱԳԵՏ ՀԱՅՆՐԻՆ ՊԵՏԵՐՄԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՔԵՐՈՎՔԵ ՊԱՏԿԱՆՅԱՆԻՆ

Ս. Ն. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Պատմահամեմատական լեզվաբանությունը, հայտնաբերելով և ուսումնասիրելով սանսկրիտի, լատիներենի, հունարենի, գերմաներենի, պասկերենի և այլ լեզուների հնչյունական, քերականական ընդհանրությունները, դրանք համարեց հնդեվրոպական ընտանիքի ազգակից լեզուներ: Հնդեվրոպաբանների աչքից չվրիպեց նաև հայերենը:

Հայերենի համեմատական ուսումնասիրության գիտական հիմքը դրեց Հայրիխ Պետերմանը 1837 թ. դրած «Հայերեն լեզվի քերականություն» աշխատությունը՝ այն համարելով հնդեվրոպական լեզու: Սակայն ինչպես Պետերմանը, այնպես էլ հետագայում Վինդիշմանը, Բոպպը, հայերենը հնդեվրոպական ընտանիքի իրանական ճյուղին դասեցին: Նրանց հարեց նաև հայագետ Ք. Պատկանյանը, որի գիտական գործունեությունը սկսվում է անցյալ դարի 60-ական թթ.:

Պատկանյանի գիտական ուսումնասիրությունները նվիրված են հայագիտության տարբեր բնագավառներին. դրադվել է հին և միջնադարյան հայ գրականության, լեզվաբանության, արևելագիտության, պատմության, դիցաբանության, հնագիտության բազմաթիվ վիճահարույց խնդիրներով: Նա առաջիններից էր, որ ընդունելով ու յուրացնելով պատմահամեմատական լեզվաբանության սկզբունքները, դրանք կիրառեց հայերենի համեմատական ուսումնասիրության մեջ՝ միաժամանակ արտահայտելով իր ինքնուրույն մոտեցումը քրեմարկվող լեզվական երևույթների նկատմամբ:

Նրա «Исследование о составе армянского языка», «Исследование о диалектах армянского языка» և այլ աշխատություններ իրենց ներդրումն ունեն գրական հայերենի կառուցվածքի և բարբառների ուսումնասիրության ասպարեզում: Պատկանյանին է պատկանում հայերեն բարբառների և գրաբարի փոխհարաբերության գիտական հարցադրումը. նա հատուկ նշանակություն է տալիս հայերենի և փոքրասիական այլ լեզուների, հայերենի և պարսկական բարբառների փոխազդեցությունների հարցին¹:

Ըստ հնդեվրոպական լեզուների շարքում հայերենի գրաված դիրքի հարցի բմբունման՝ Պատկանյանի գիտական գործունեությունը երկու շրջանի է բաժանվում: Առաջին շրջանում ընդունել է համեմատական լեզվաբանության մեջ ժամանակին իշխող այն տեսակետը, որի համաձայն հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղին պատկանող լեզու է:

1875 թ. Հյուբշմանը իր նշանավոր «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզվաընտանիքում» հոդվածում քննադատելով Պետերմանի, Վինդիշմանի, Բոպպի, Լագարդի, Մյուլլերի ընդունած տեսակետը հայերենի՝ իրանական ճյուղի լեզու լինելու մասին, գրում է, որ այս հայագետներին է հետևում նաև Ք. Պատկանյանը «Исследование о составе армянского языка» աշխատությամբ², Հետագայում Պատկանյանը հրաժարվեց հայերենի դիրքի հարցում նախկին սկզբունքներից՝ ընդունելով Հյուբշմանի՝ հայերենի անկախ հնդեվրոպական լեզու լինելու տեսակետը:

¹ Ն. Աղայան. Հայ լեզվաբանության պատմություն. հ. 1, Երևան, 1958, էջ 98:

² H. Hübschmann. Über die Stellung des Armentischen in Kreise der Indogermanischen Sprachen.—KZ. Bd. 23, Berlin, 1875, S. 5.

1850, 1861, 1863 թթ. Պատկանյանը եղել է արտասահմանում՝ Վենետիկում, Մյունխենում, Բեռլինում, Փարիզում, Վիեննայում, ուսումնասիրել հայկական ձեռագրերը, որոնք հետագայում ներկայացրել է «Հալ պատմական գրականության համառոտ տեսություն» աշխատության մեջ: Մասնակցել է արևելագետների միջազգային գիտաժողովներին: 1873 թ. Փարիզում զեկուցել է Յրանսիայում, Գերմանիայում հայերենի ուսումնասիրության և Վանի բեվլուագի արձանագրությունների մասին, իսկ 1874 թ. Լոնդոնում կայացած արևելագետների երկրորդ միջազգային գիտաժողովում ներկայացրել է ուսույնային գիտությունը: Այս գիտաժողովում հայկական բաժանմունքի նախագահը Մարս Մյուլլերն էր:

Պատկանյանը Փարիզում լսել է Ֆրանսիացի հայագետ Դյուլորիեի, Գերմանիայում՝ Պետերմանի դասախոսությունները: Արտասահմանում նա ծանոթացել է Լվորպացի արևելագետների, հայագետների հետ, մշտական նամակագրություն է ունեցել Դյուլորիեի, Պրյուտոմի, Լագարդի, Մյուլլերի, Յուստիի, Պետերմանի, Հյուբշմանի հետ, տեղեկացրել է նրանց Ռուսաստանում հայագիտության նվաճումների մասին, ուղարկել է համապատասխան գրականություն. այս կամ այն գիտական հարցի շուրջը մտքեր փոխանակել:

Որպես հայագետ Պատկանյանը ճանաչված էր Եվրոպայում: Հայագիտության տարբեր բնագավառների վերաբերյալ նրա գիտական աշխատությունները արձագանք են ստացել այնտեղ՝ թարգմանվել, գրախոսվել արտասահմանյան մամուլում:

Պետերմանը և Պատկանյանը սերտ նամակագրություն են ունեցել, որը ոչ թե սոսկ անձնական, այլ գիտական կարգի է: Մաշտոցի անվան Մատենադարանում, Պատկանյանների արխիվում, պահպանվել են Պետերմանի ինը նամակները: Դրանք կարևոր են այն առումով, որ բացահայտում են երկտասարդ հայագետի պատմական, թարգմանական, լեզվաբանական աշխատությունների գիտական արժեքը, շոշափում են նաև տարբեր բնույթի լեզվաբանական հարցեր: Ցավոք, մեր ձեռքի տակ չկան Պատկանյանի պատասխան նամակները, սակայն այնտեղ շոշափված հարցերը մասամբ պարզ են դառնում Պետերմանի նամակներից:

Պետերմանը համալսարանի դասախոս Պատկանյանը ուսական արևելագիտությանը ծանոթացրեց հայ հին և միջնադարյան հեղինակներին՝ Նրանց երկերի ուսերեն թարգմանություններով: 1862 թ. նա թարգմանում է Սեբեոսի «Պատմությունը», որին արձագանքում է Պետերմանը: Վերջինս նշում է, որ Գերմանիայում հարյուր գիտնականից հազիվ մեկն է տիրապետում սլավոներենին, հետևաբար Պատկանյանի աշխատանքը չի տարածվի. նա ավստոսում է, որ այն չի շարադրված գերմաներեն, ֆրանսերեն կամ լատիներեն լեզվով, որոնց տիրապետում են նաև ուսուցիչները: Պատկանյանը թեև շարունակել է իր աշխատությունները գրել ուսերեն, այնուամենայնիվ հաշվի է առել գերմանացի հայագետի խորհուրդը, և նրա որոշ աշխատություններ հրատարակվել են ֆրանսերեն, գերմաներեն՝ բարձր գնահատականի արժանանալով Եվրոպացի հայագետների կողմից:

Երբ Պատկանյանն աշխատում էր «Փորձ Սասանյանների դինաստիայի պատմության մասին» ուսումնասիրության վրա, Պետերմանը գրում է նրան. «Ես գիտեմ, որ Ձեր այս աշխատության համար Դուք հունական, լատիական աղբյուրներ եք օգտագործել, և այն կատարյալ կլինի» և ոգևորվելով հայ լեզվաբանի հաջողություններով, արժեքավոր խորհուրդներ է տալիս, հանձնարարում օգտվել լրացուցիչ աղբյուրներից՝ արաբական և պարսկական ձեռագրերից:

Պետերմանը ոչ մի կերպ համամիտ չէր Պատկանյանի այն կարծիքին, որ գրաբարը արհեստական լեզու է եղել. ըստ նրա՝ այդ ենթադրությունը հազիվ թե հաջողություն ունենա: Գիտականորեն հերքում է դա, իրավացիորեն գրտ-

3 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), Պատկանյանների ֆոնդ, թղթ. 146, վավ. 14:

նելով, որ լեզուն ընդհանուր է բոլորի համար, ուստի չի կարող հասարակութ-
 թյան միայն մի խավի՝ ուսյալների կողմից ստեղծվել և միայն նրանց հաղոր-
 դակցմանը ծառայել: «Այդպիսի լեզուն, — գրում է նա, — երբեք չի կարող դառ-
 նալ համընդհանուր գրական լեզու, և որքանով որ Ձեր նամակում Դուք այն
 համեմատում եք գերմաներեն գրական լեզվի հետ, ապա դրանով Դուք հենց
 ասում եք, որ Հայաստանում այն եղել է համընդհանուր լեզու, ինչպիսին իրա-
 կանում այն կա՞:»

*geliebte Beate von die Photographie Ihnen verlei-
 hen Frau Gomalin, welchen ich mich angele-
 gentlichst empfehle; wage ich hiermit zu er-
 mauern. Ihre Fräulein Schwägerin habe ich bei
 Ihrer Anwesenheit schon durch Ber-
 lin nicht gesehen,
 Mit den herzlichsten Grüßen von und den
 Meinigen verbleibe ich*

*Ihr
 Berlin Louisenstr. 41.
 D. 10/2 64.*

*Ihren Dankes ergeben
 H. Petzmann
 Gumburg.*

Պետերմանի նամակի վերջին տողերը

Պետերմանը նամակներից մեկում գրել է նաև հայերենի ուսումնասիրու-
 թյան ասպարեզում գրվելիք հետազոտությունների մասին: Այդ տեսակետից
 հատկապես կարևոր է 1864 թ. գրված նամակը, երբ Պատկանյանը աշխատում
 էր «Հետազոտություն հայերենի կառուցվածքի մասին» աշխատության վրա:
 Գերմանացի-լեզվաբանը գրում է. «Նս ուրախ եմ, որ Դուք որոշեցիք ուսումնա-
 սիրել նաև Ձեր մայրենի լեզվի քերականական կողմը: Չնայած այս բնագավա-
 ռում արված որոշ հիմնավոր աշխատանքների, հատկապես ծագումնաբանու-
 թյան տեսակետից իմ հարգելի ուսուցչի և ընկերոջ՝ Բոպպի աշխատանքի,
 ղեռն շատ բան կա անելու, որը լրիվ անհնար է, մասնավորապես մի գերմա-
 նացու համար»⁴: Պետերմանը համեստորեն չի խոսում հայերենի համեմատա-
 կան ուսումնասիրությանը մատուցած իր ծառայության մասին, բավականա-
 նում է Ֆրանց Բոպպի անունը տալով: Մինչդեռ վերջինս 1857 թ. իր համեմա-
 տական քերականության 2-րդ հրատարակության մեջ է ավելացնում հայերե-
 նը որպես հնդեվրոպական լեզու՝ հենվելով նաև Պետերմանի աշխատության
 վրա:

Պետերմանը, ի տարբերություն Բոպպի, որն իր աշխատություններում
 պատմականության սկզբունքը չի կիրառում, կարևորություն էր տալիս լեզվի
 պատմական ուսումնասիրմանը. «Մի երկրորդ ոչ պակաս կարևոր աշխատանք
 կլինի իմ կարծիքով նաև լեզվի պատմական ուսումնասիրությունը, որի հա-
 մար իմ ժամանակն ու ուժերը չեն բավականացնի: Այդ աշխատանքի մեջ քալ
 առ քալ ժամանակի հետ, սկսած գրողների նշած ամբողջական բառերից և
 բառաձևերից, որոնք աղբյուրների ստույգ տվյալների հետ մի ամբողջու-
 թյուն են ներկայացնում, կարելի է հասնել լեզվի ամբողջ կառուցվածքի և ժա-
 մանակի ընթացքում նրա կրած փոփոխությունների մասին հիմնավոր գիտե-
 լիքների և այդպես կարելի է ցույց տալ, թե ինչպես է լեզուն աստիճանաբար
 վերածվել այսօրվա ժողովրդախոսակցական լեզվի»⁵: Նա իրավացիորեն գրու-
 նում է, որ լեզուն պետք է ուսումնասիրել իր պատմական զարգացման մեջ:

⁴ Նույն տեղում, վավ. 25:

⁵ Նույն տեղում, վավ. 18:

⁶ Նույն տեղում:

Այս նամակում գերմանացի հայագետը դնում է հայերենի արմատական բառարան ստեղծելու անհրաժեշտության հարցը, որտեղ կրենվիին բառակազմական ձևերը և կառուցյունները, որով ավելի պարզ կդառնար լեզվի հարստությունը և նրա ազգակցությունը մյուսների հետ: Պետերսանի ցանկությունը Պատեանյանը փերձել է իրականացնել՝ ձեռնարկելով «Նյութեր հայերենի բացատրական բառարանի համար» հետազոտությունը, որի գրելու շարժառիթը Հյուլդմանից ստացված «Armeniaca II» աշխատությունն է եղել⁷:

Պատկանյանը վերահիշյալ աշխատության մեջ տվել է մի շարք բառերի ստուգաբանությունները, որոնք Հյուլդմանը, Լագարդը համարել էին բնիկ հայերեն, մինչդեռ դրանք պահլավական փոխառություններ են: Այդ աշխատությունը բարձր է գնահատվել Մյուլլերի, Լագարդի, Հյուլդմանի, Հանուշի կողմից:

1854 թ. Պատկանյանը պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Հետազոտություն հայերենի կառուցվածքի մասին» թեմայով: Այդ աշխատության առաջին արժեքավորողներից մեկը Պետերսանն է եղել, որը նրան հասցեագրված նամակներից մեկում գրում է. «Իմ շնորհավորանքներն եմ հղում դոկտորաշան աստիճանի առթիվ, քրին արժանի եք եղել հայերենի կառուցվածքի կատարյալ, արժեքավոր և խորը հետազոտության համար»⁸:

Պետերսանին հետաքրքրել է նաև հայ գրերի հարցի շուրջը տարվող վիճարանությունը: Նա գրում է. «Այժմ իմ ձեռքի տակ է էմիլի «Հայերեն գրերի գյուտի մասին» հոդվածը»: Մ. էմիլին ընդունում էր դանիելյան և մեսրոպյան գրերը, ընդ որում գտնում էր, որ առաջինները թյուրիմացաբար են այդպես կոչվել, բանի որ գոյություն են ունեցել հին ժամանակներից՝ պայմանական, հիերոգլիֆային նշանների տեսքով, և Մեսրոպը լրացրել է պակաս տառերը ու ամբողջացրել այբուբենը⁹: Փաստորեն նսեմացվում է Մեսրոպ Մաշտոցի՝ հայերենի գրերը ստեղծողի դերը: Այս տեսակետը խիստ քննադատել են ոչ միայն հայ, այլև եվրոպացի գիտնականները: Այդպես է վարվել նաև Պետերսանը: «Որ հայերը սկզբնական հիերոգլիֆային գրեր են ունեցել, ես չեմ կարող հավատար: Համաձայն չեմ նրան նաև այն հարցում, որ Մեսրոպը միայն որոշ տառեր է հորինել: Այնպիսի մի գիտնական, ինչպիսին էմիլն է, ինչպե՞ս կարող է նսան մոլորության մեջ ընկնել»¹⁰, — գրում է Պետերսանը և խոստանում գրախոսել հոդվածը: Երևք տարի անց «Journal Asiatique» ամսագրում տպագրվում է Պետերսանի «Հայ գրերի մասին» հոդվածը:

Բ. Պատկանյանը ևս չի ընդունել էմիլի տեսակետը հայ գրերի մասին: «Հետազոտություն հայերենի կառուցվածքի մասին» աշխատության մեջ նա գրում է, որ էմիլը այդ հարցը լուծում է ապրիորի¹²:

Նամակները մեկ անգամ ևս հաստատում են Պետերսանի մեծ հետաքրքրությունը հայերենի բարբառների նկատմամբ: Նա գրում է, որ էջմիածնից հկա՛՛ մի վանականի տված տեղեկության համաձայն թիֆլիսի հայ արքեպիսկոպոսը Ուտիքի բարբառի քերականության ձեռագիրն է ունեցել և խնդրում է ձեռք բերել այն¹¹: Յավոք, հետագա նամակագրության մեջ այդ մասին տեղեկություններ չկան:

Նամակները վկայում են, որ Պատկանյանը, իր ուսումնասիրություններում արժարժած շատ սկզբունքների մասին հաշտնել է Պետերսանին: Վերջինս ընդունել է նրա այն տեսակետը, որ շատ քան լեզվում բացատրվում է միայն բարբառների մանրամասն ուսումնասիրության դեպքում: Նամակագիրը նշում

7 Տե՛ս նույն տեղում:

8 К. Патканов. Материалы для армянского словаря. Вып. I, Спб., 1882, с. 4.

9 ՄՄ, Պատկանյանների ֆոնդ, թղթ. 146, վավ. 21:

10 История Армении Моисея Хоренского. М., 1858, с. 365.

11 ՄՄ, Պատկանյանների ֆոնդ, թղթ. 146, վավ. 21:

12 К. Патканов. Исследование о составе армянского языка. Спб., 1864, с. XIII.

13 ՄՄ, Պատկանյանների ֆոնդ, թղթ. 146, վավ. 14:

է. «Ծն լիովին համամիտ եմ Ձեր այն կարծիքին, որ ժողովրդական բարբառները լույս են սփռում հին լեզվի ճանաչման վրա: Երբ Դուք ասում եք, որ ներկա դերբայը տեղային տարբերություններ ունի, այսպիսով ես հավատում եմ, որ ում, ամ, ըմ վերջավորությունները դերբայական վերջավորություններ չեն, այլ լրիվ ներգոյական են և ուտում եմ ժամանակը կապված չէ edem sumi հետ, այլ in edendo sum—ուտելու մեջ եմ: Այսպիսով, հեշտ բացատրվում է և-ը Ազուլիսի բարբառում, որը կա Դ. Անհաղթի մոտ և Դիոնիսիոս Քրակացու քերականության հայերեն թարգմանության մեջ. ըն կամ և նախդիրը հավասար է in-ին: Սա Ազուլիսի բարբառի հին մնացորդ է»¹⁴:

Պատկանյանը «Հետազոտություն հայերենի բարբառների մասին» աշխատության մեջ բացատրում է այդ և-ի ծագումը. «Մենք վերն ասացինք, որ տրական հոլովի հետ ներգոյական հոլով կազմող ի նախդիրը նոր բարբառներում դուրս է եկել գործածությունից: Այն անհետացել է, բայց ոչ բոլոր դեպքերում: Ազուլիսի բարբառում այն հանդես է գալիս մյուս հին և նախդիրի ձևով, որ հանդիպում է հնագույն հեղինակների մոտ (Դավիթ) և կապվում ուրիշ հընդ-վորոպական լեզուների in, en նախդիրների հետ»¹⁵:

Ազուլիսի բարբառում Պատկանյանի նկատած այդ առանձնահատկությունը հաստատում են նաև այդ բարբառի հետագա ուսումնասիրողները՝ Ս. Սարգսյանցը, Հր. Աճառյանը:

Քերովբե Պատկանյանի «Ազուլիսի հայ բարբառի մասին» գերմաներեն հոդվածը հրատարակվել է Բեռլինի ակադեմիայի տեղեկագրում, 1866 թ. նոյեմբերի 26-ին: Լեզվաբանական գրականության մեջ այս հոդվածի հեղինակի և հրատարակման տարեթվի հետ կապված հակասություն կա: Հրաշյա Աճառյանը «Հայ բարբառագիտություն» ուսումնասիրությունում: Ազուլիսի բարբառի վերաբերյալ աշխատություններից առաջինը նշում է 1866 թ. լույս տեսած Պատկանյանի վերոհիշյալ գերմաներեն հոդվածը: Սակայն 1934 թ. «Քննություն Ազուլիսի բարբառի» հետազոտությունում այդ աշխատության հեղինակներ են նշվում Պատկանյանն ու Պետերմանը: Պետերմանի նամակները և Պատկանյանի աշխատությունները օգնում են ճշգրտել այդ հարցը:

Պատկանյանը նպատակադրվել էր Ազուլիսի բարբառի մասին հոդվածը Գերմանիայում հրատարակել: 1864 թ. գրված նամակում Պետերմանը հաղորդում է, որ ուղարկում է Պատկանյանի հոդվածը՝ նվիրված Ազուլիսի բարբառին, ինչպես նաև Թիֆլիսի բարբառի մասին իր գեկուցումը, որը կարդացել է Վիեննայի ակադեմիայում: Այդ առիթով Պետերմանը գրում է. «Ձեր երկրորդ նամակը շատ հետաքրքիր լեզվաբանական փորձ է Ազուլիսի հայ բարբառի մասին: Ինձ համար ուրախալի է, որ զբաղվում եք բարբառագիտությամբ: Դա հենց այն առարկան է, որը վաղուց գրավել է իմ ուշադրությունը»¹⁶: Նա գրում է տպագրության դժվարությունների մասին, որոնք նույնիսկ խոչընդոտել են իր՝ երբայերենի քերականության ուսումնասիրության փորձը հրատարակելուն: Այնուամենայնիվ նա խոստանում է օգնել Պատկանյանին այդ հարցում¹⁷: նասակներից մեկում Պետերմանը առաջարկել է հոդվածը ներկայացնել «Ազուլիսի հայ բարբառի մասին ըստ Պետերբուրգի պրոֆեսոր Պատկանյանի հաղորդման» վերնագրով¹⁸:

Պատկանյանն իր «Հետազոտություն հայերենի բարբառների մասին» ուսումնասիրության սկզբում գրում է. «Ազուլիսի հայ բարբառի մասին» ոչ մե՛ծ հոդվածում ես համառոտ ներկայացրել եմ իմ տեսակետը հայ բարբառների վերաբերյալ, նկատի ունենալով հետագայում առանձին աշխատության

¹⁴ նույն տեղում, վավ. 25:

¹⁵ К. Патканов. Исследование о диалектах армянского языка. СПб., 1869, с. 20.

¹⁶ ՄՄ, Պատկանյանների ֆոնդ, թղթ. 146, վավ. 25:

¹⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁸ նույն տեղում, վավ. 26

մեջ խոսել շատ ավելի մանրամասն¹⁹։ Այնուհետև ներկայացնելով մի քանի բարբառների, ինչպես նաև Ագուլիսի բարբառի հնչյունական, ձևաբանական և տանձնահատկությունները, նա հայտնում է, որ վերոհիշյալ հոդվածը պրոֆեսոր Պետերմանը վերանայել և հրատարակել է Բեռլինի ակադեմիայի տեղեկագրում, 1866 թ.²⁰։

Պետերմանը իր վերջին շորս նամակներում ճշտել է հոդվածի ձևագրի անընթեռնելի շատ բառեր։ Գերմանացի հայագետը փորձել է ուղղել Պատկանյանին, այսպես՝ մառնիմ ունչ քերականական ժամանակաձևում ունչ-ը համարում է ոչ թե ժխտում արտահայտող, այլ քաղցած իմաստը ունեցող բառ և ստացվում է՝ քաղցած սեռնեմ։ Պատկանյանը չի ընդունել այդ և մի շարք այլ դիտողություններ։

Պատկանյանը, «Հետադոտություն հայերենի բարբառի մասին» ուսումնասիրության մեջ բնութագրելով մի շարք աշխատություններ, որոնցում հետադոտվել են բարբառները, դրանց թվում նշում է Պետերմանի հայտնի աշխատությունը՝ նվիրված Թիֆլիսի բարբառին և չի ակնարկում նրա՝ Ագուլիսի բարբառի մասին հոդված գրելու մասին։

Այդ փաստերին պետք է ավելացնել նաև այն, որ վերոհիշյալ հոդվածը ընդգրկում է Ք. Պատկանյանի առաջ քաշած սկզբունքները, որոնք արժարժվել էին դեռևս 1864 թ. գրած «Հետադոտություն հայերենի կառուցվածքի մասին» աշխատությունում, որտեղ հեղինակն ընդգծում է. «Այն համոզմանն ենք դալիս, որ գրաբարի հիմնավոր հետադոտության համար անհրաժեշտ է ժողովրդական բարբառների իմացությունը։ Ամենից առաջ կարծում եմ, որ հայերենի բոլոր բարբառները հին ժամանակներից էլ գոյություն են ունեցել»²¹։

Պատկանյանի «Ագուլիսի հայ բարբառի մասին» հոդվածը հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման և Ագուլիսի բարբառի քերականական առանձնահատկությունների ուսումնասիրման առաջին փորձն է։

Պատկանյանը, լեզվաբանների ուշադրությունը հրավիրելով հայ բարբառների ուսումնասիրության վրա, ինքն էլ մանրամասն հետադոտում է դրանք։ Իր «Исследование о составе армянского языка» աշխատության մեջ նա աշխարհագրական սկզբունքով ներկայացնում է հայերենի 12 բարբառ։ Իսկ 1866 թ. «Ագուլիսի հայ բարբառի մասին» գերմաներեն աշխատությունում թեև բարբառները բաժանում է արևելյան և արևմտյան խմբերի, սակայն այդ դասակարգման հիմքում ձևաբանական երկու հատկանիշ է դնում՝ ներգոյական հոլովի առկա լինելն ու չլինելը և անկատար ներկա ու անցյալ ժամանակների կազմությունը։ Ըստ Պատկանյանի վերոհիշյալ հոդվածի՝ արևելյան խմբի բարբառներում ներգոյական հոլովը, անկատար ներկան և անցյալը կազմվում են ու-ով, իսկ արևմտյանում՝ կը մասնիկով. այս խմբում ներգոյական չկա, և նրա իմաստը արտահայտվում է սեռականով և մեջ կապով։

Հետագայում նա խորացրեց դա «Исследование о диалектах армянского языка» աշխատության մեջ, արևելյան խմբին դասելով Երևանի, Ագուլիսի, Ղաբաբաղի, Խոյի, Զուղայի, Աստրախանի, Թիֆլիսի, իսկ արևմտյան խմբին՝ Մուշի, Նոր Նախիջևանի բարբառները։

Այսպիսով, Պատկանյանին Պետերմանի գրած նամակներում հիմնականում շոշափվել են հայերենի ուսումնասիրության, հայ բարբառների, գրաբարի, հայ գրերի գյուտի մասին կարևոր հարցեր։ Նամակներում ակնհայտ են լեզվաբանական այս կամ այն հարցի վերաբերյալ երկու լեզվաբանների նույն կամ տարբեր մոտեցումները։

Այս նամակները օգնում են ճշտելու «Ագուլիսի հայ բարբառի մասին» բերմաներեն հոդվածի հեղինակի հարցը։ Պետերմանի նամակները ուղղված

¹⁹ К. Патканов. Исследование о диалектах..., с. 1.

²⁰ Տե՛ս նույն տեղում։

²¹ К. Patkanoff. Über den armenischen Dialect von Agulis. Berlin, 1866. S. 727.

Ք. Պատկանյանին գիտական արժեք ունեն նրանց չայացքների ուսումնասիրության անսակետից:

Մեծ է գերմանացի հայագետ Հ. Պետերմանի մատուցած ծառայությունը ոչ միայն հայ լեզվաբանությանը, այլև հայագիտությանն ընդհանրապես:

Պետերմանի սերն ու հետաքրքրությունը հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի նկատմամբ դրսևորվեց նրանում, որ Գերմանիայում պարբերաբար հրատարակվեցին գրքեր, հոդվածներ՝ Օրինակ՝ Արքունական հանրագիտարանում նա ներկայացրել է Հայաստանը՝ «Մխիթար և Մխիթարյանք», «Մ. Խորենացի», «Նեղոս», «Սահակ», «Դավիթ», «Նեստորականք» հոդվածներով²²:

Պատկանյանի նամակները Պետերմանին, ինչպես և եվրոպացի այլ հայագետներին, ընդհանրապես կարևոր նշանակություն ունեն այն առումով, որ գրանով գիտնականը նրանց անդեկացրել է Ռուսաստանում հայագիտության ձեռք բերած նվաճումների մասին:

Պետերմանը հետաքրքրվել է նաև վրացագիտության հարցերով՝ Պատկանյանի միջոցով կապ պահպանելով վրացագետ, հայագետ Բրոսսի հետ:

ПИСЬМА АРМЕНОВЕДА ГЕНРИХА ПЕТЕРМАНА КЕРОВБЕ ПАТКАНЯНУ

С. Г. АМИРДЖАНИЯН

Резюме

Известный армянский лингвист второй половины XIX века Керовбе Патканян одним из первых применил принципы сравнительно-исторического языкознания к изучению армянского языка. Будучи известен в Европе, он поддерживал научные связи с европейскими востоковедами, в частности с основоположником сравнительного изучения армянского языка Генрихом Петерманом. В Матенадаране им. Маштоца хранятся девять ценных писем Петермана к Патканяну, в которых обсуждаются вопросы изучения древнеармянского языка, армянских диалектов, а также происхождения армянских букв. По этим письмам устанавливается принадлежность К. Патканяну статьи „Über den armenischen Dialect von Agullis“.

²² Գ. Շրոմպֆ. Հայկական ուսումնասիրություն. Կենտրոն. 1895, էջ 283: